

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/6

26 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Զի-Էմ-Զի Գրուպ» ՍՊԸ 01.12.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 21.11.2014 թ-ի թիվ 6204650 արձանագրության դեմ:

«Զի-Էմ-Զի Գրուպ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

21 նոյեմբերի 2014թ-ին ՀՀ ֆինանսների նախարարության էրեբունու հարկային տեսչության ընթացիկ հսկողության թիվ 1 բաժնի աշխատակիցների կողմից առանց «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված որոշման և (կամ) հանձնարարագրի «Զի-Էմ-Զի Գրուպ» ՍՊԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) անցկացվել է օպերատիվ-հետախուզական միջոցառում՝ հսկիչ գնում, որի արդյունքում 21.11.2014 թ-ին կազմվել է առոչինչ հանդիսացող թիվ 6204650 արձանագրությունը հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ:

Ընկերությունը գտնում է, որ թիվ 6204650 արձանագրությունը առոչինչ է հետևյալ պատճառաբանությամբ.

հսկիչ գնումը հանդիսանում է օպերատիվ-հետախուզական միջոցառում, որն օբյեկտիվորեն իրավաբանական կամ ֆիզիկական անձի դեմ ուղղված գաղտնի միջոց է: Գաղտնի միջոցների կիրառումը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների միջամտություն է: Տվյալ դեպքում միջամտությունը տեղի է ունեցել ընկերության տնտեսական գործունեության և աշխատակիցների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի նկատմամբ, որոնք ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներ են: ՀՏ աշխատակիցները, Ընկերության և աշխատակիցների ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները սահմանափակելիս, ունեցել են արդյոք ՀՀ օրենքներով սահմանված լիազորություն, թե ոչ: Ղեկավարվելով որ օրենքով և ինչ հիմքով է հարկային մարմինը ի դեմս ՀՏ աշխատակիցների, 21.11.2014 թ-ին իրականացնել Ընկերության ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների սահմանափակում՝ հսկիչ գնում:

Նախ հստակ է, որ օպերատիվ հետախուզական միջոցառումներն, այդ թվում՝ հսկիչ գնումը, կարող են իրականացնել բացառապես հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանման հարկային ծառայողները: Տվյալ դեպքում հսկիչ գնումն իրականացրած անձինք ընդամենը հանդիսանում են ՀՀ ֆինանսների նախարարության էրեբունու ՀՏ ընթացիկ հսկողության թիվ 1 բաժնի աշխատակիցներ: Հարկ է նշել նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմում առկա է օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչությունը, այդ թվում՝ ՕՀՎ 13-րդ /էրեբունու/ բաժինը: Այն փաստը, որ ընկերության և աշխատակիցների նկատմամբ կիրառված գաղտնի միջոցը իրականացվել է նման գործողությունների համար իրավասություն չունեցող

պաշտոնատար անձանց կողմից, այդ գործողության կատարումը դուրս է մղում օրենքի դաշտից դուրս, հետևաբար հսկիչ գնումը կատարվել է անօրինական կերպով:

Երկրորդ, օրենսդիրը, կարևորելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների սահմանափակումը պետք է խիստ կանոնակարգված և հիմնավորված լինի, սահմանել է մի շարք պարտադիր ընթացակարգային պահանջներ, որոնք պարտադիր են համապատասխան պետական մարմինների համար և որոնք հանդիսանում են իրավունքների չարաշահման, պետական մարմինների կամայականությունների դեմ քաղաքացիների պաշտպանության երաշխիքներ: Մասնավորապես, հսկիչ գնումը պետք է ունենա հստակորեն ամրագրված մեկնարկի և ավարտի ժամկետներ: Միաժամանակ, հատկանշանակ է, որ օրենսդիրը նախատեսել է առանձին տեսակի վարչական վարույթներ եզրույթը, որոնց առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ օրենքներով և միջազգային պայմանագրերով: Այսինքն, հսկիչ գնման որպես օպերատիվ հետախուզական միջոցառում, վարչական վարույթն ինքնին տարբերվում և առանձնացվում է մնացած վարչական վարույթներից, քանի որ հանդիսանալով սահմանադրական հիմնական իրավունքների սահմանափակմանն ուղղված գաղտնի գործողություն վերջինիս առանձնահատկությունները սահմանվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով: Նման պայմաններում սույն իրավահարաբերության նկատմամբ «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների կիրառելի են բացառապես այն մասով, որ մասով որ վերջինս չի կարգավորվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով:

Տվյալ կոնկրետ դեպքում ՀՏ աշխատակիցների կողմից 21.11.2014 թ-ին կատարված և նույն օրը կազմված հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ արձանագրության համար հիմք է հանդիսացել 22-ը հոկտեմբերի 2014 թ-ի ՀՀ ֆինանսների նախարարության էրեբունու հարկային տեսչության պետի թիվ 6204650 հանձնարարագիրը, որտեղ հսկիչ գնում իրականացնելու ուսումնասիրության ժամկետը սահմանված է եղել 10 աշխատանքային օր՝ մինչև 2014 թ-ի նոյեմբերի 5-ը ներառյալ:

Ավելին, ՀՏ աշխատակիցների կողմից խախտվել են նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 1.5. կետի պահանջը, մասնավորապես, վերջիններիս կողմից 05.11.2014 թ-ին Ընկերությանը չի հանձնվել թիվ 6204650 հանձնարարագիրը և չի կազմվել համապատասխան արձանագրություն:

Ելնելով վերոգրյալից ակնհայտ է, որ ՀՏ աշխատակիցների կողմից 21.11.2014 թ-ին կատարված հսկիչ գնումը և վերջինիս հիման վրա 21.11.2014 թ-ին արձանագրության կազմումը կատարվել են վերոգրյալ իրավական ակտերի ակնհայտ և կոպիտ խախտումներով, չլինելով օրենքներով սահմանված ստորաբաժանման աշխատակիցներ և առհասարակ չունենալով օրենքներով սահմանված որոշում և (կամ) հանձնարարական:

Հիմք ընդունելով վերոգրյալը գանգատաբերը գտնում է, որ 21.11.2014 թ-ին կազմված թիվ 6204650 արձանագրությունը ենթակա է վերացման, ուստի խնդրում է վերացնել 21.11.2014 թ-ին կազմված թիվ 6204650 արձանագրությունը:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նախ նշվեց, որ «Ջի-Էմ-Ջի Գրուպ» ՍՊԸ գանգատում բերված այն պնդումները, որոնք վերաբերվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրույթները խախտված լինելուն, հիմնավոր չեն, քանի որ վերջինով կարգավորվում են այլ իրավահարաբերություններ և սույն գործի հետ որևէ առնչություն չունեն:

Վիճարկվող հսկիչ գնումն իրականացվել է ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի դրույթներով: Այսպես, ղեկավարվելով Հավելված 2-ի 1.4-րդ կետի դրույթներով ՀՀ ֆինանսների նախարարության էրեբունու հարկային տեսչության պետը 22.10.2014 թ-ին հրապարակել է թիվ 6204650 հանձնարարագիրը, որի համաձայն «Ջ-Էմ-Ջի Գրուպ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 21.11.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204650 արձանագրությունը, որում մասնավորապես արձանագրվել է.

«ՖՆ էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Հայկազ Հարությունյանը 21.11.2014 թ-ին ժամը 16:35-ին ք.Երևան, Նար Դոսի 36/7 հասցեում գործող «Ջի-Էմ-Ջի Գրուպ» ՍՊԸ-ին պատկանող մանրածախ առևտրի կետից պատվիրել է 1 հատ դուռ 75.000 դրամ արժողությամբ, վճարել է 30.000 դրամ կանխավճար (կանխիկ), որը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Հսկիչ գնումն իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 16:41-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 0 դրամ: Չմուտքագրված գումարը ժամը 17:25-ին մուտքագրվել է ՀԴՄ և ժամը 16:25-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվություն 30.000 դրամ հասույթով: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Ջի-Էմ-Ջի Գրուպ» ՍՊԸ կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի բ) ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ հսկիչ գնումը կատարվել է ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Հայկազ Հարությունյանի կողմից, որի իրավասությունները «Ջի-Էմ-Ջի Գրուպ» ՍՊԸ-ում հսկիչ գնում կատարելու վերաբերյալ սահմանվել են ՀՀ ֆինանսների նախարարության էրեբունու հարկային տեսչության պետի 21.11.2014 թ-ի թիվ 181 հրամանով:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի 3-րդ պարբերության համաձայն. «Սույն օրենքով նախատեսված տնտեսավարող սուբյեկտների պաշտոնատար անձանց և ստուգում իրականացնող անձանց իրավունքներն ու պարտականությունները գործում են սույն կետի յոթերորդ պարբերությամբ սահմանված ուսումնասիրությունների անցկացման դեպքերում»:

Վերոգրյալից հետևում է, որ հսկիչ գնումների անցկացման դեպքերում գործում են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով նախատեսված տնտեսավարող սուբյեկտների պաշտոնատար անձանց և ստուգում իրականացնող անձանց իրավունքներն ու պարտականությունները:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ծառայողական պարտականությունները կատարելու անհնարինության պատճառով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին այլ անձով փոխարինելու դեպքում փոփոխությունը կատարվում է հրամանով, որի մասին տնտեսավարող սուբյեկտը ծանուցվում է սույն հոդվածով սահմանված կարգով»:

Քննարկվող դեպքում ՀՀ ֆինանսների նախարարության էրեբունու հարկային տեսչության պետի 21.11.2014 թ-ի թիվ 181 հրամանով հսկիչ գնում իրականացնելու գործընթացին ներգրավվել է հարկային տեսուչ Հայկազ Հարությունյանը, սակայն նշված հրամանի մասին տնտեսավարող սուբյեկտը չի ծանուցվել: Այսինքն, խախտվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները:

«Վարչարարության հիմունքների և վարչական փարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 21.11.2014 թ-ի թիվ 6204650 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ